

Զ. ԵՂՈՒԱՐԴ Վ. ՍԻՐՈՒՆԵԱՆ



Աշխարհի մարդոց համար թերեւս անհմանալի խորհուրդ մնայ վշտին քաղցրութիւնը՝ զոր կը զգան ու կը ճաշակեն երկնքի համար ապրող հոգիները:

Այդ սրբասուն հոգիներէն էր տիպարը Զ. Եղուարդ Վ. ի, որ տասնեութ տարի, 1920-1937, անդամաւոր, զամուսնացած սրբավայրի իր խցիկի մէջ, ճգնեցաւ, աղօթեց ու կրեց զուարճանալով... Կ'անցնէր տարին եղանակներով, ծառ ու ծաղիկով... և նա հոն էր միշտ, գրեթէ անշարժ, համբերաւոր, յաւատարմութեամբ:

Զրեւորուն մէջ երկնք ու վշտի ծաղիկ, ու բերան՝ օրհնութիւն:

Փոխարէն միաբանակիցներու սիրոյն և գուրգուրանքին որոնցմով շրջապատուած էր՝ նա իր կողմէն Աստուծոյ խօսքն ունէր անոնց, երկնքի միջնաբերդի մէջ, և յաւատարմութեամբ Սէր, սէր՝ Աստուծոյ և եղբայրներուն: Իր առջեւ կը խոնարհէր ծունկը վանականներուն, ստանալու իրմէ որպէս Հայր խոստովանութեան՝ երկնքի ներքինութիւնը՝ քաւարար Ս. Խորհուրդով:

Ենած է Կ. Պոլիս, 1865, Մայիս 1ին, միջրատութեան անունը՝ Գրիգոր. աշակերտած է Թ. Թէրզեանի, յետոյ մեր Միթի. Հայրերուն՝ Սաղմոսեանի դարձը, և ուսման և բարեկրթութեան մէջ իր յառաջադիմութեան համար ձրիավարժ զրկուած Մուրատ-Ռաֆ. վարժարանը 1878ին:

Հանգուցեալի թուովներուն մէջէն կ'օգտուի իր համառօտ ինքնակենսագրութենէն: Վենետիկ հասնելով «Ներկայացայ, կ'ըսէ, վարժարանի Տեսուչ Վ. ին՝ Զ. Գրիգոր Վ. ճեղքեալի, որ զիս ընդունեցաւ ուրախ դէմքով, և խրատեց ու քաջալերեց և ուրախութեամբ զիս ընկերներուս ներկայացուց. և հաճախ երանութիւնս սկսաւ: Այն ատեն ճանչցայ որ Աստուծոյ տան մէջ եմ. ամենայն ինչ յաջող էր. կային ներքին վարդապետներ՝ կրօնական, լեզուական և գիտական ճիւղերուն. այնպէս որ չորս տարի վերջը ուսումնական ընթացքը կատարեալ ընելու վրայ էի, համարձակեցայ Տեսուչ Վ. իս խորհրդի որ զիս Բատուա զրկէ որպէս զի բժշկութեան գիտութիւնը սորվիմ. սրտիս մէջ զրոշմունք է իր քաջալերութիւնն և հաւանութիւնը սիրալիր... «Բայց յետ քանի մը ամիսներու երկնք սիրտս

շարժեց՝ որ փոխանակ մարմնաւոր բժիշկ ըլլալու՝ հոգեւոր բժիշկ ըլլամ. նախ խորհուրդ հարցուցի խոստովանահօրս՝ Վ. Զ. Գարեգին Վ. ի (Զարեհանալեան), թէ «Միթարեան վանքը կ'ուզեմ կրօնաւոր ըլլալ»: Հաւանութեամբ ծնողացը և Զ. Գ. Զարեհանալեանի առաջնորդութեամբ փափաքին կը հասնի. «ուրախութեամբ Միթարեան վանք մտայ... (1882): Հոս սըրբակրօն կեանքը մեր վախճանն էր... հոս ուսայ յաշխարհայնոց հրաժարիլ, աստուածայնոց մօտենալ. ուսայ իմաստասիրութիւն, բարոյական և տեսական աստուածաբանութիւն, և 1887 Ապրիլ 10ին Զատիկի տօնին՝ աստուածային քահանայութեան սուրբ աստիճանն ընդունեցայ:

«Տարի մը վերջ (1888) հրամանաւ մեծաւորաց Հոռմ գացի Զ. Ստեփան Վ. Սարեանի հետ, Գոմիսիկեան վարդապետաց համալսարանը երկու տարի Աստուածաբանութեան ընթացքն ըրի, վկայական ընդունեցայ և դարձայ ի վանս»:

1890-1891 զինքը կը գտնենք Մուրատ-Ռաֆ. վարժարան՝ իբր ուսուցիչ, կարճէս փոխարէն հատուցանելու վայելած բարիքին. «անմոռաց երախտագիտութիւն ունիմ մեծանուն Բարեբարներուն, կ'ըսէ նա. այս վարժարանն եղաւ իմ երջանկութիւնս և կեանքս»: Ապա 1895-1897ին այնտեղ կը վարէ Ուսումնապետի պաշտօնը՝ ինչպէս կանխաւ 1891-93ին վանքի աշակերտաց:

Կրթական իր այս գործը կը շարունակէ ապա երկար տարիներ զաստիարակելու Հայ չքաւոր մանուկները Պարտիզակի՝ ուր ժողովրդապետական պաշտօնով մնաց 15 տարի՝ 1897-1906 և 1909-1915, մինչեւ մեծ աղէտը, ուսկից փոխկուցաւ Երամ Էֆ. ի և Արաք. Նուրիակ Գերպ. Dolciի ձեռքով:

Կը բաւէ ըսել թէ խոնարհ, աղքատ ու հոգեւ սէր առաջնորդ մ'էր որ Աստուծոյ խօսքին հետ իր պատուէն բաժին կը հանէր աղքատներուն:

1906-1909 եղած է Ուխտիս վարիչ անդամ, ինչպէս և Տպարանապետ և ուսուցիչ Իմաստասիրութեան:

Զինադադարին անցաւ Հոռմ և 1920ին Ս. Ղազար «ուր գտայ, կ'ըսէ, կրօնաւորական կեանք և խաղաղութիւն... ուր Աստուածամայրը օրըստ օրէ կը փայլեցնէ իր մայրական հոգատարութիւնը և ես մինչեւ այսօր (Մայիս 1936) կը վայելեմ աստուածային մեծ շնորհք...: Տարի մը վերջ, 25 Յունիս 1937 կը մարէր իր մարմնի առկայծ ճրագը և հոգին կը թռչէր երկնք, սուրբի մը կորուստի ցաւը թողած ամբողջ Ուխտիս:

Սրբութեան օրինակին հետ իբր գրական վաստակ կը մնան մեզի «Միթին ընթացք իմաստասիրութեան» (տպ. 1899), Լամբի «Աստուածաբանական խնդիրներ» թրգմ. (1930), և Աւիշանի «Սիսուան» ին Ֆրնս. թրգմ.:

Ներսէս Գասապեան. — Հայոց պարբերական մամուլը — Լիակատար ցուցակ Հայ Լրագրութեան՝ սկզբից մինչեւ մեր օրերը. 1794-1934. (Կազմեց Գարեգին Լեւոնեան). 201

Հայկական արձագանգ

Ամսօրը ճանդէսներ Միթարեան վարժարաններուն մէջ.

Ներկայ մը. — ա) Մուրատեան վարժարան — Սէր — Բարիկ. 207

Խմբ. — բ) Մուրատ-Ռաֆայէլեան վարժարան — Վենետիկ. 212

Աղեքսանդրացի. — գ) Միթարեան վարժարան — Աղեքսանդրիա 214

Ս. Ղազարու Այցելումներ իմ. — Եգիպտոսի Հայ Արիւնքը 216

— Աղեքսանդրիոյ Միթարեան վարժարանի Սաներ՝ դէպ ի Հոռմ — Վենետիկ 219

— Ռուբէն Մամուլեան Ս. Ղազարու մէջ. 221

Մահաւեր

Խմբ. — Հանգիստ հոգոյ Զ. Եղուարդ Վ. ի Սիրունեան 224

Nersès Kassabian. — «La presse périodique Arménienne - Catalogue complet des Revues et des Journaux arméniens dès les origines jusqu' à nos jours, 1794-1934 (par' Karékine Lévonian) 201

Echos Arméniens

Fêtes de fin d'année dans les Collèges Mékhitharistes

Présent. — a) Collège «Samuel Moorat» à Sèvres - Paris 207

Réd. — b) Collège «Moorat-Raphaël» à Venise 212

A. — c) Collège «Mékhitariste» à Alexandrie 214

Visiteurs de St. Lazare

Réd. — Les Boy - Scouts arméniens d'Egypte 216

— Elèves des Collèges des PP. Mékhitharistes à Rome et à Venise 219

— Rouben Mamoulian 221

Nécrologie

Réd. — † P. Edouard Sirounian 224

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

Սիւնեական Լեւոն Ս. — Շնորհաց ցօղեր. տարեգրքի. Ա-Գ. 1934-1937. տպ. Մարտէլ. Սմբատ Բիւրատ. — Կենսագրութիւն Տիգրան Երկաթի. տպ. Զ. Բիւրատ. Աղեքսանդրիա, 1935, էջ 96, գինը՝ 6 դհկն.

Եր. Սրմաթէլեանեան. — Հարգատ որդի. զգայացունց վէպ. տպ. Զ. Բիւրատ. Աղեքսանդրիա. 1936. էջ, 148, գ. 7 դհկն.

Բարրիկեան Միքայիլ. — Գիցապաշտ չեւա, դան կամ Հեւլէն Գիթ. տպ. Արուշան Աթէնք, 1937, էջ 274, գ. 1,50 տոլար - 5 չիլին.

Ա. Սարախան. — Բելգիա և Հայերը. տպ. Վիլնոս, 1937, էջ 253, գ. 4. ֆր. 2.

Արտաւազ Արքեպոս. Սիւրմեան. — Ընտանեկան Գաստիարակութիւնը մեր տուններէն. տպ. Հալէպ, 1937, էջ 140.

— Հոգաբարձութիւնը հին Երրայեցոց մէջ. տպ. Հալէպ. 1937, էջ 70.

Խրաչեան Կիւրեղ. — Արիւնի ճանապարհին, տպ. «Մասիս», Սոֆիա, 1937, էջ 156, գ. 12 ֆր.

Յովհ. Պողոսեան. — Հայաստանի աշխարհագրութիւն. տպ. Սահակ - Մեսրոպ, 1937, Գ. հրէ, էջ 181, գ. 12. ֆր.

Պետրոսեան Մասիս. — Նոր Արաբիկ. պոմին. և վիճակագր. տպ. Գահիրէ, 1937, էջ 48.

Յ. Վարժապետեան. — Ուղեցոյց Մարտէլի Թ. տարի. 1937, տպ. Բարիկ, էջ 80.

Banateanu Vlad. — La traduction arménienne des tours participiaux grecs. տպ. Bucarest, 1937, էջ 153, գ. 200 լէյ.

Պէթր իմօն — Հայր մեր 41 հին ու նոր լեզուներով և 63 թարգմանութիւններով. հր. Paul Hugon, Los Angeles, 1936, էջ 53.

Միքիարեան Ս. — Հին ու նոր երգեր. տպ. Բարիկ, 1937, էջ 57, գ. 5. ֆր.

Հայ Տոհմաւորներ. աշխատասիրողներ՝ Աճառեան - Խաչատրեան - Բատմաշեան - Մանուկեան - Շամլեան - Աղաթեան. Կ. Պ. 1937. էջ 92, գ. 100 դր.